

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՀԱՆԴԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎԵԼԻՔ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՍԵՂՄԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

3.1. ՀՈԴՎԱԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հանդեսում տպագրվելիք հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին: Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածը վերադարձվում է հեղինակին:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-12 էջի սահմաններում:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորություն նը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold): Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/ կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում:

Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը:

Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/ կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հ.Գ. Հայաստանի Հանրապետության դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսը լույս է տեսնում երկու ամիսը մեկ անգամ:

3.2. ՍԵՂՄԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հանդեսին ուղղված ցանկացած հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) հեղինակի մասին հակիրճ տեղեկություն

բ) համառոտ շարադրանք՝ սեղմագիր (Абстракт, Abstract),

գ) բանալի բառեր (Ключевые слова, Keywords),

Սեղմագիրը, հակիրճ, 300-500 բառի սահմաններում, պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը (հոդվածի արդիականությունը, ուղղվածությունը, նորույթը, կիրառական նշանակությունը):

Սեղմագրերը պարունակում են նաև յուրաքանչյուր լեզվով հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր: Սեղմագիրը կցվում է հոդվածին տպագրվում համակարգչով՝ 9 տառաչափով, A5 /148x210 մմ/ :

Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է լինի հինգից պակաս: